ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Գ. Մահարու անվան հ. 176 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (20 դասաժամ), ինֆորմատիկայի (17 դասաժամ) , պատմության (6 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3 x 4 չափի,

2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ).

3.անձը հաստատող փաստաթուղթ.

4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը ՝առկայության դեպքում,

5.ինքնակենսագրություն (Ձև 5),

6.այլ պետությունների քաղաքացիները ՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ.

8.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե Ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են մայիսի 4-ից մինչև մայիսի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}–ից 16^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա մայիսի 19-ին ՝ժամը 14^{00} - ին Երևանի Գ. Մահարու անվան հ. 176 հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ք. Երևան, Մալաթիա- Սեբաստիա , Հովնաթան 33: Տեղեկությունների համար զանգահարել (010) 72-77-42 հեռախոսահամարով: